ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ 892919 / 23.09.19

26.09 2019թ. N 2665 - Ա

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ Սեպտեմբերի 23-Ի ԹԻՎ 2601 - Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

26 SEP 2019

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների հաստատման մասին» թիվ 2601-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Հրամանի հավելվածի վերնագրի «չպահանջող» բառը փոխարինել «պահանջող» բառով:

/ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

25.09.2019

X

VERIFIED OCSP 25.09.2019 17:34:32 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Մաlb. 26.09.19 ժամը 11⁰⁰

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

23.«09» 2019թ N -Ա 2601-Լի

8929 15.58
23 SEP 2019

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 2-ի 58-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0403134619 առ 17.09.2019թ հետգրանցումային փոփոխությունների փորձագիտական եզրակացությունները,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ընդունել 2 դեղի հետգրանցումային փոփոխություններն համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ձ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) Նախարարի հրամանն ընդունվելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին էլեկտրոնային փոստի միջոցով և (կամ) փոստային առաքմամբ:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

23.09.2019

X

VERIFIED OCSP 23.09.2019 11:26:41 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ստաց 23.09.2019 ժամը 15.45

Հավելված

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի

2019թ. սեպտեմբերի 23 - ի N 2601 – Ա հրամանի

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ՉՊԱՀԱՆՋՈՂ

ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բացթողման կարգ | Եզրակացության համարը և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ինտեգրիլին | էպտիֆիբատիդ | լուծույթ կաթիլաներարկման | 0,75մգ/մլ; 100մլ ապակե սրվակ | Գլաքսո Օփերեյշնս Յու Քեյ ՍՊԸ, Հարմիր Ռոուդ Բերնարդ Քեսլ, Դուրհամ Կո, ԴԼ12 8ԴՏ | Միացյալ Թագավորություն | ԳլաքսոՍմիթԿլայն (Իռլանդիա) Լիմիտեդ, 12 Ռիվերվոկ, Սիթիվեստ Բիզնես Կամպուս, Դուբլին 24 | Իռլանդիա | Դ | 14311/1 |
| 2. | Ինտեգրիլին | էպտիֆիբատիդ | լուծույթ ներարկման | 2մգ/մլ; (1) 10մլ ապակե սրվակ | Գլաքսո Օփերեյշնս Յու Քեյ ՍՊԸ, Հարմիր Ռոուդ Բերնարդ | Միացյալ Թագավորություն | ԳլաքսոՍմիթԿլայն (Իռլանդիա) Լիմիտեդ, 12 Ռիվերվոկ, Սիթիվեստ Բիզնես Կամպուս, Դուբլին | Իռլանդիա | Դ | 14312/1 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Քեսլ, Դուրհամ Կո, ԴԼ12 8ԴՏ | | 24, Իոլանդիա | | | |